Fondation Martin Bodmer, Geneva
Cod. Bodmer 34
ԱՒԵՏԱՐԱՆ

ՍՏԱՄՊԱՒԼ, Սուրբ Նիկողայոս եկեղեցի ՌԾԶ. դեկտ. ԻԳ. - 1606

ԳՐԻՉ՝Միքայէլ: ԾԱՂԿՈՂ՝ Յովանէս աբեղայ Ստամպաւլցի: ՍՏԱՑՈՂՔ՝ տէր Յակոբ, տէր Մինաս դպիր:

ԹԵՐԹ՝ 256+1 (կրկն.՝ թ. 57). չգրուած՝ Աաբ, Բաբ, Գբ, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 174ա: ՊՐԱԿ՝ Ա-ԺԳx20 (Ա 17, ԺԳ 19): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19x14: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14x10՝ մօտաւոր): ԳԻՐ՝բոլորգիր, ծաղկողի՝ նոտրանման բոլորգիր: ՏՈՂ՝ 25: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ մուգ շագանակագոյն կաշի՝ դռնակով եւ արծաթէ կրկնակազմով, Ա. փեղկին՝ Քրիստոսը Քառակերպեան աթոռին եւ Տիրամայրը առաքեալների հետ, Բ. փեղկին՝ Տիրամօր թագադրումը Սուրբ Երրորդութեան կողմից, միջուկը՝ տախտակ, լուսանցակողերը՝ կարմիր, ծաղկազարդ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ) + 1 (Գ), սպիտակ թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ - Մատթէոս՝ 11բ (ոսկու վրայ սպիտակով՝ «Մաթէոս»), Մարկոս՝ 64բ («Մարկոս աւետարանիչ»), Ղուկաս՝ 106բ («Ղուկաս աւետ[արանիչ]»), Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 174բ («Յովհանէս», «Պրոխ[որոն]»): Խորան՝ 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա: Կիսախորան՝ 12ա, 65ա, 107ա, 175ա: Լուսանցազարդ՝բուսական, թռչնային, խաչ, տաճար, ծառ: Զարդագիր՝ հրեշտակագիր, կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, նարնջի, կապոյտ, երկնագոյն, մանուշակագոյն, կանաչ, սպիտակ, շագանակագոյն, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի դռնակի ստորին հատուածը պատռուած, տեղ-տեղ խոնաւութիւնից դեղնած, սեւացած, կան մոմի հետքեր եւ թանաքաբծեր. թերթերը թանաքակեր, թուղթը մասամբ նորոգուած. թ. 61, 102, 170 եւ 221՝ եզրերին փակցուած փոքրիկ կարմիր գործուածք՝ իբրեւ էջանիշ. լուսանցակողերը գունաթափ: թ. 30՝ ստ. լս-ի պատռուածքը կարկատած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1բ-2ա Եւսեբեայ Թուղթ առ Կարպիանոս:
2. 3բ-10ա Համաբարբառ. կանոն Ա-Ժ. (նաեւ՝ լուսանցային Ցրուացանկ):
3. 12ա-62բ Աւետարան ըստ Մատթէոսի *(62բ [Նխդր.] – Մա[տ]թէոս աւետարանիչն ի կողմանէ Փրկչին մերոյ... եւ Աւետարանս գլխոորս ԿԹ.(69), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս աւիտենից. ամէն):*
4. 63ա Նախադրութիւն, 63ա-4ա Գլուխք, 65ա-103բ Աւետարան ըստ Մարկոսի:
5. 104ա Նախադրութիւն, 104բ-6ա Գլուխք, 107ա-73ա Աւետարան ըստ Ղուկասու:
6. 173բ Նախադրութիւն, 175ա-225ա Աւետարան ըստ Յովհանու (225աբ Իրք կնոջն շնացելոյ):
7. 226ա-50բ Յայտնութիւն Յովհանու աստուածաբանի - *Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել... Ասաց որ վկայեացն զայս. Գամ ես վաղվաղակի. ամէն: Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ի վերայ ամենայն սրբոց:*
8. 250բ-4ա Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի - *Էր ընդ եղբարս երանելին Յովհաննէս... մինչդեռ մեք ուրախ եաք եւ լայաք, աւանդեաց զհոգին ի ձեռն Տեառն, որում փառք յաւիտեանս. ամէն:*

Ծնթ. Ունի լուսանցային սրբագրում-լրացումներ՝ 194բ, 228բ, 246բ, 251ա, 253ա:

ՅԱՒԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ա. ծաղկողի, խորանների տակ՝

1ա-2ա, 3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի արարեալ [Մեկնութիւն խորանացն] - *Զառաւել հրաշից արժանի... ի խաչն եւ ի խաչեալն, առաքեալս եւ մարգարէս:*

Տպ. տե՛ս՝ Մատենագիրք հայոց, հտ. Զ, Ը. դար (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան 2007, էջ 556-560: Վիգեն Ղազարյան, *Մեկնութիւնք խորանաց. Արվեստի տեսության միջնադարյան հայկական բնագրեր,* Հետազոտություն եւ բնագրեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2004, էջ 255-262: Thomas F. Mathews, Avedis K. Sanjian, with contributions of Mary Virginia Orna and James R. Russell, *Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel,* Dumbarton Oaks Studies 29, Washington DC 1991, pp. 208-211:

Բ. Այլ՝ ԺԷ. դ. ձեռքով

Պիպ. Գա. [Աւետարանացոյց] - Աւետարան հանգստեան. Մատթէոս - ՃԺ. Յայնմ ժամանակի պատասխանի... Յոհան Բժշկութեան. ԼԴ. ԼԸ. ՁԹ. Բ-Գ. թուղթ շրջէ՝ փոխն է՝ [ի] ծնէ կոյրն կարդայ։

Ծնթ. Ձեռագրի մէջ առկայ են այլ ձեռագրից կտրած եւ որպէս էջանիշ գործածուած բոլորգիր գրով ԺԷ. դարի թղթէ 3 փոքր պատառիկ. 1. «[Բեթսայ]իդայ, ի ք[աղաքէ] [Ան]դրեայ եւ Պե[տ]րոսի» (Յովհ. Ա. 44), 2. «[յ]աշխարհն գեր[գես]սացոց, որ է յա[յն]կոյս հանդեպ [Գ]ալիլեայ։Ընդ ելանելն» (Ղուկ. Ը. 26-27), 3. «[եւ ան]դ էր մինչեւ ցվախճան Հերովդէի։ Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին, որ ասէ» (Մատթ. Բ. 14-15)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 254ա*(Գրչի) Փառք ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն՝ գերակատար երից անձնաւորութեան, միոյ բնութեան եւ աստուածութեան՝ յԷտ, յայժմուս եւ ապագայն, եւ յանսպառ յաւիտեանն յաւիտենից. ամէն։ Որ արարչագործ զօրութեամբն իւրով շարժեալ իսկական բարի յանճառ իսկութենէն գոացոյց զերկինս եւ զերկիր, ստեղծ եւ զդրախտն՝ տեղի տարփային եւ բնակ անմահութեան, գոյացոյց եւ զմարդն ձեռաւք իւրովք՝ ըստ* |254բ| *պատկերի բարերարութեան իւրոյ, եւ եդ ի դրախտին փափկութեան՝ լինել անախտ եւ մնալ անմահ։ Իսկ ողորմելին այն ունկնդիր չարին եղեալ ի ձեռն մահաբեր դրախտուն ժառանգեաց զերկիր անիծից, եւ փոխանակ անմահութեան՝ մահու եղեալ ժառանգորդ։ Վասն որոյ ի լրման ժամանակի խանդաղատեալ արարչական բնութիւն՝ տեսնելով զպատկերն իւր անկեալ ընդ աղտիւք՝ ծառայել մեղաց եւ մահու, լինի Որդին Աստուծոյ Որդի Կուսի եւ աթոռակիցն Հաւր, Որդի մարդոյ, եւ իւրով աստուածացեալ մարմնովն եբարձ զպարտիսն Ադամա զամենայն կիրս մարդկային կրելով, զատ եւ որիշ ի մեղաց։ Հնազանդեցաւ կամաւորաբար մահու խաչի եւ եղեւ պատարագ հաշտեցուցիչ Հօր, եւ իւրով անապական արեամբն հաստատեաց զնորս եկեղեցի դրախտ անմահութեան, եւ բխեցոյց ի սմանէ գետս չորեսին՝ առոգել զերեսս երկրի, այսինքն՝ զաստուածախաւս վարդապետութիւն իւր, զոր յիւրում տնաւրէնութեան խօսեցաւ, եւ ուսոյց աշակերտացն իւրոց, զի ասէ. Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ, վասն որոյ եւ [ի] դասուց առաքեալցն ընտրեցան ավետարանիչք չորք, որք եղեն ձեռն եւ լեզու Աստուծոյ, զի լի արարին զտիեզերս աւետարանաւն Քրիստոսի եւ փոխանակ կառացն աստուածութեան, զոր մարգարէն ի վերա Քորար գետոյն տեսանէր. սոքա երեւացան ի մէջ եկեղեցւոյ, վասն զի դէմք մարդոյն բերէ զնմանութիւն երջանկին Մատթէոսի, զի մարդկաւրէն ասէ ծընեալ զԱստուածն Բան ի Մարիամա՝ որդի Աբրահամու եւ Դաւթի, իսկ դէմք առիւծուն՝ զսրբասնունդն Մարկոս, զի որպէս զառիւծ, ասէ, եղեալ զՅիսուս ի Յորդանանէ, եւ էր ընդ գա*|255ա|*զանս, իսկ կերպ զուարակին՝ զքաղցրաբարբառն Ղուկաս, քանզի հեզաբար ասէ զՔրիստոս զենեալ ի գիւտ անառակին, իսկ նրմանութիւն արծուոյն՝ զաստուածաբանին Յոհանու, զի եղեալ բարձրաթռիչ ի վերուստ, որոտաց զԲանն ի սկզբանն է, որում հետեւեալ այս աւետեաց աւետարանիս իր մարդկային բնութենէ։*

Ոմանք զհոգին նուիրեցին Աստուծոյ, զի զմարմինն ի խաչ հանին կարեաւք, ոմանք զոյիւք անցաւորաւք զանապականն ստացան, ըստ այսմ սարասի եղեւ ցանկացող այսմ պաշտելի եւ աստուածախաւս մատենիս հեզահոգի, բարի եւ հաւատարիմ մղտեսի Յակոբ *քահանայն եւ զիւր որդին՝ մղտեսի* Մինաս *սարկաւագն, եւ զիւր կենակիցն՝ զ*Յուստիանէն, *եւ զհայրն իւր՝ զտէր Յակոբն, եւ զիրիցկինն՝ մղտեսի Շիրինն, եւ զեղբարքն իւր՝ զԵաղուն, զՄինաս եւ զՔրիստոստուրն, եւ զքորքն իւր՝ զԵաղութն, զՅուստիանէն, զՅաննայն եւ զայլ ամենայն արեան մերձաւորս իւր, եւ ըստացան զսա հալալ ընչից իւրեանց։*

Արդ, աղաչեմ զամենեսեանդ՝ զաւգտեալս ի սուրբ Աւետարանէս, որք զմայլիք յանծայրածաւալ ծովէս եւ փարթամանայք յանծախելի զանձուս, յիշեսջի՛ք յաղաւթս ձեր զմղտեսի տէր Յակոբն *եւ զմղտեսի* Մինաս *դպիրն, եւ մեղաց թողութիւն խնդրեցէ՛ք նոցա. եւ որք յիշէք՝ յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ. ամէն։*

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս հայոց ՌԾԶ. (1606), *դեկտեմբերի* ԻԳ. *(23), ի դառն եւ ի դիժար ժամանակին, որ զամենայն երկիր ճալալիքն աւերեցին, եւ մեք վտարեցաք ի յաւտարութիւն եւ եկաք ի յաստուածապահ քաղաքս ը*Ստամպալ։ *Գրեցաւ ձեռամբ բազմամեղ եւ անարհեստ գրչի* Միքայիլի, *ի մայրաքաղաքն* ըՍտամպալ՝ *ի մահալան* |*255բ*| Վլանկա, *ի դուռն* Սուրբ Նիկաւղայոսին, *ի յառաջնորդութեանն* Գրիգոր *քաջ բաբունապետին։ Արդ, աղաչեմ զամենեսեանդ՝ յիշեցէ՛ք ի սուրբ աղաւթս ձեր զստացող սորա եւ զամենայն արեան մերձաւորս իւր՝ զկենդանիսն եւ զհանգուցեալսն առ Քրիստոս (1 տող չգրած)։ Դարձեալ յիշեցէ՛ք զ*Միքայէլ *գրիչս եւ զծնօղսն իմ եւ զայլ ամենայն արեան մերձաւորս (2 տող չգրած)։ Դարձեալ յիշեցէ՛ք* զՍուրբ Նիկաւղայոսի *զպատուելի քահանայքն՝ զտէր* Աբրահամեանքն, *եւ զեկեղեցականն, եւ զայլ պաղի տոլվաթաւորքն, որ զօրինակն շնորհեցին։ Նա արարիչն Աստուած ձեզ՝ յիշողացդ եւ մեզ՝ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։*

2. 64բ (Ծաղկոդի)*Ո՛հ, աղաչեմ զամենեսեան՝ որք օգտիք ի սմանէ տեսանելով եւ կամ օրինակելով, յիշեսջի՛ք վերելեակ աղաւթիւքդ ձեր նկարողի սորին* ըՍտամպալցի Յովանէս *աբեղայս, որ անունս ունիմ եւ գործս ոչ. աղաչեմ, աղաչեմ։* |65ա| *Խնամող, պահող սորին աւրհութիւնն ի յԱստուծոյ առնու։*

106բ *Յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր նկարագրողի սորին* զՅովանէսի, *որ եմ ի քաղաքէն* Բուզանդիու, *եւ աշակերտ բանի եւ տեառն տէր* Յակոբ Զէյթունեցոյ *բաբունոյ։* |107ա| *Ո՛հ, աղաչեմ զձեզ, զի խնամով բռնէք, որ բազում աշխատութեամբ կատարեցի վասն անհմուտութեան իմոյ, զի օրինակ ոչ կայր։*

175ա *Եթէ ոք յանդգնաբար ձեռօք ձեռամուխ լինի, պատիժն Կայենի առցէ։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 236ա (աջ լս-ում) ՌԲՃ. եւ Կ. (1811)։

2. Պիպ. Բա (Ի. դ., մանուշակագոյն թանաքով, շղագիր) «Կը պատկանի Ս. Գէորգ եկեղեցոյ Եւդոկիոյ»։

ՆՇՈՒՄ՝ Ա. պահպանակին «M. MS. I. 1, Cod. Bodmer 34», «1702» (մատիտով)։ Ա. պահպանակին փակցուած թղթին ձեռագրի համառօտ նկարագրութիւնն է անգլերէնով՝ վերցուած 1939թ. Լոնդոնում վաճառքի հանված ձեռագրերի ցուցակից (The Bible in Many Languages: A Catalogue of Manuscripts and Printed Editions from Earliest Times (Catalogue 675), Maggs Bros. Ltd, London, May, 1939, էջ 3-4)։ Պիպ. Բա մատիտով՝ «145», Պիպ. Գա՝ ստորին լուսանցում, մատիտով. «Chr. Rel. T IV, Bibel I. 2, Hs. Armenische»։